ՀԱՃԱԽ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ

Ի՞նչ է կորոնավիրուսը

Նոր Կորոնավիրուսը շնչառական վիրուս է, որը շատ նման է գրիպի: Երբ այն հայտնաբերվեց՝ տեսքով շատ նման էր թագի, որից հետո էլ ստացավ անվանումը: Պաշտոնապես այն անվանում են COVID-19-ը:Կորոնավիրուսը պատկանում է այն վիրուսների խմբին, որոնք , տարբեր հիվանդություններ են առաջացնում՝ սովորական հարբուխից մինչև ծանր հիվանդություն, օրինակ՝ Արևելքի շնչառական համախտանիշը (MERS-CoV) և Ծանր սուր շնչառական համախտանիշը (SARS-CoV):

Վտանգավոր է արդյո՞ք նոր կորոնավիրուսային վարակը (2019-nCoV)

Ինչպես այլ շնչառական հիվանդությունները, կորոնավիուսը կարող է առաջացնել թեթև ախտանշաններ՝ հարբուխ, կոկորդի ցավ, հազ և ջերմություն, իսկ որոշ անձանց մոտ այն կարող է ավելի ծանր ընթանալ և հանգեցնել թոքաբորբի կամ դժվարացած շնչառության:

Նոր կորոնավիրուսային վարակով կարո՞ղ ենք վարակվել ընտանի կենդանուց:

Ոչ, ներկայումս ապացուցված ոչինչ չկա, որ ընտանի կենդանիներ պահող անձինք կարող են վարակվել նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) կամ տարածել այն:

Նոր կորոնավիրուսային վարակը կանխարգելող կամ բուժող դեղամիջոցներ կա՞ն

Ոչ: Այս պահի դրությամբ նոր կորոնավիրուսային վարակի (2019-nCoV) կանխարգելման կամ բուժման համար որևէ դեղամիջոց չկա: Սակայն, վարակված անձանց վիճակը թեթևացնելու կամ ապաքինելու նպատակով նշանակվում է համապատասխան խնամք, իսկ ծանր դեպքերում՝ ախտանշանային բուժում:

Նոր կորոնավիրուսային վարակը (2019-nCoV) արդյո՞ք փոխանցվում է մարդուց մարդուն

Այո, նոր կորոնավիրուսը (2019-nCoV) շնչառական վարակ է, և կարող է փոխանցվել մարդուց մարդուն՝ վարակված անձի հետ սերտ շփման միջոցով:

Ո՞վ կարող է վարակվել նոր կորոնավիրուսային (2019-nCoV) վարակով

Մարդիկ, ովքեր շփում են ունեցել տվյալ հիվանդություն ունեցող անձնանց հետ, ովքեր ճանապարհորդել են վայրեր , որտեղ շրջանառվել է սույն վարակը:

Ովքե՞ր են գտնվում ռիսկի խմբում

- Թույլ իմունային համակարգ ունեցող անձինք(օր. քաղցկեղ)
- Մեծահասակներ՝ 70 տարեկան և բարձր
- Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք (օրինակ՝ շաքարային դիաբետ և սրտանոթային հիվանդություններ)
- Խիտ բնակեցմամբ տարածքում գտնվող անձինք
- Կալանավայրում գտնվող անձինք

Ինչպե՞ս է տարածվում Նոր կորոնավիրուսային վարակը

Նոր կորոնավիրուսը վարակը կարող է փոխանցվել վարակված անձի հետ սերտ շփման ընթացքում, փոշտալիս , հազալիս : Ուստի, կորևոր է պահպանել շնչառական հիգիենայի կանոնները :
Հազալիս կամ փոշտալիս անհրաժեշտ է փակել բերանը և քիթը արմունկով կամ անձեռոցիկով (անձեռոցիկն օգտագործելուց հետո անմիջապես գցել աղբամանը): Կարևոր է նաև ձեռքերի հիգիենայի պահպանումը. անհրաժեշտ է պարբերաբար լվանալ ձեռքերը օճառով և ջրով կամ մաքրել ալկոհոլային հիմքով ախտահանիչով:

Որո՞նք են նոր կորոնավիրուսի ախտանիշները

Ախտանիշները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- ✓ Բարձր ջերմություն
- ✓ Տենդ
- ✓ Հազ
- ✓ Կոկորդի ցավ
- ✓ Թուլություն
- ✓ Դժվարացած շնչառություն

Որքա՞ն ժամանակ մարդ կարող է վարակիչ լինել այլոց համար

Վարակված անձի վարակիչ լինելու շրջանը դեռևս անհայտ է:Հավանական է, որ վարակը կարող է փոխանցվել նախքան առաջին ախտանշանների ի հայտ գալը, մինչ մեկ օր՝ ախտանիշների բացակայությունից հետո: Այդ իսկ պատճառով , ներկայումս իրականացվում է 14-օրյա մեկուսացում՝ տվյալ հիվանդությամբ ռիսկային համարվող երկրներից վերադարձածների և Կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված դեպքի հետ սերտ շփում ունեցած անձանց համար:

Երեխաները և նորածինները վարակվու՞մ են Կորոնավիրուսային հիվանդությամբ

Մինչև այժմ երեխաների շրաջանում նոր Կորոնավիրուսային հիվանդությամբ արձանագրված դեպքերը կազմում են ցածր տոկոս՝ համեմատած լայն բնակչության հետ:

Ի՞նչ անել , եթե նոր կորոնավիրուսային վարակի (2019-nCoV) ախտանիշներ են ի հայտ եկել

- Անմիջապես մեկուսացվել տան մյուս անդամներից
- Զանգահարել բժշկի կամ տեղամասային պոլիկլինիկա և տեղեկացնել նրանց, որ հնարավոր է, որ դուք վարակված եք կորոնավիրուսային հիվանդությամբ
- Բժշկին կամ հիվանդանոց այցելության ժամանակ , նույնպես տեղեկացրեք, որ կարող եք վարակված լինել Կորոնավիրուսային հիվանդությամբ
- Հնարավորինս շուտ տեղեկացրեք ձեր գործատուին
- Եթե առկա է ծանր ախտանիշներ, օրինակ՝ դժվարացած շնչառություն.
  Զանգահարեք 8003, 060838300 և կանչեք շտապ օգնություն
  Տեղեկացրեք շտապ օգնության անձնակազմին , որ հնարավոր է, որ դուք վարակված լինեք Կորոնավիրուսային հիվանդությամբ, որից հետո բժիշկը կապ կհաստատի համապատասխան մարմնի հետ ՝ մեկուսացման գործընթացը կազմակերպելու համար:

Ինչպե՞ս կանխարգելել կորոնավիրուսային վարակի տարածումը

- Հաճախակի լվանալ ձեռքերը
- Հազալիս և փռշտալիս փակել բերանը և քիթը անձեռոցիկով, այնուհետև գցել այն աղբի մեջ
- Օգտագործել ալկոհոլային հիմքով ախտահանիչներ
- Շփման մեջ պահպանել առնվազն 1 մետր հեռավորություն

Անվատնգ է արդյո՞ք Կորոնավիրուսային հիավանդության կենտրոններ հանդիսացող երկրներից ծանրոցներ ստանալը

Այո, անվտանգ է: Նման պարագայում նոր Կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելու վտանգ չի սպառնում: Ըստ վերլուծությունների ՝ կորոնավիրուսները երկար չեն գոյատևում այնպիսի առարկաների վրա, ինչպիսիք են՝ ծանրոցներ, նամակներ:

Հակաբիոտիկների կիրառումը արդյունավետ է արդյո՞ք նոր Կորոնավիրուսային վարակի բուժման համար

Ոչ, որովհետև հակաբիոտիկները վիրուսների դեմ չեն կիրառվում (կիրառվում են միայն մանրէների դեմ):Հակաբիոտիկներ կարող են նշանակվել միայն այն դեպքում, եթե դուք հոսպիտալացվել եք Կորոնավիրուս (2019-nCoV) ախտորոշմամբ և ձեզ մոտ առկա է համակցված մանրէային վարակ: